ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

05.04.2017թ կնքված N «ՀՀ ՖՆ ՇՀԾՁԲ-15/4-14/17» ծածկագրով հեռուստատեսային ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան <<6>> փետրվար 2019թ

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Պատվիրատու>>, մի կողմից, և «Յուքոմ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Եսայանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, և 05.04.2017թ կնքված N «ՀՀ ՖՆ ՇՀԾՁԲ-15/4-14/17» գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 7.3 կետով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը **որոշեցին**

1.1 Հաստատել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծառայությունների մատուցման նպատակով ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը (կցվում է):

1.2 Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի առավելագույն քանակները՝< 5> և <7> փոփոխել՝ դարձնելով համապատասխանաբար՝ <0> և <11>:

1.3 Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև համաձայնագիրն ուժի մեջ մտնելը՝ 08.01.2019թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև համաձայնագիր կնքելը կատարողի կողմից ծառայության մատուցման դիմաց վճարումը իրականացվում է այդ համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2. Այլ պայմաններ

2.1. 05.04.2017թ. կնքված N «ՀՀ ՖՆ ՇՀԾՁԲ-15/4-14/17» ծածկագրով հեռուստատեսային ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածները կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Յուքոմ» ՍՊԸ	ՀՀ ֆինանսների նախարարություն
ք.Երևան, Գ.Լուսավորիչ 9	ք.Երևան, Մ.Ադամյան 1
«Ամերիաբանկ» ՓԲԸ	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 1570043102134100	ՀՀ 900011018539
ՀՎՀՀ 00024873	ՀՎՀՀ 02629081
«Յուքոմ» ՍՊԸ-ի տնօրեն	ՀՀ ՖՆ գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
_____ Հ. Եսայան	_____ Վ.Հարությունյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված 1
05.04.2017թ. կնքված N «ՀՀ ՖՆ ՇՀԾՁԲ-15/4-14/17» ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
<< 6 >> -փետրվար 2019թ կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.1	Թվային հեռուստատեսություն		30000	30000	100000	100000	100000	200000	200000	200000	330000	330000	330000	330000

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ածողական կարգով:*

ԿԱՏԱՐՈՂ
«Յուքոմ» ՍՊԸ
ք.Երևան, Գ.Լուսավորիչ 9
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570043102134100
ՀՎՀՀ 00024873
«Յուքոմ» ՍՊԸ-ի տնօրեն

_____ Հ. Եսայան
(ստորագրություն)

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարություն
ք.Երևան, Մ.Ադամյան 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011018539
ՀՎՀՀ 02629081
ՀՀ ՖՆ գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար

_____ Վ.Հարությունյան
(ստորագրություն)